

# ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

## **ՎԱՐԴԱՆ ԱԹՈՅԱՆ**

*Ազգային անվտանգության խորհրդի  
աշխատակազմի առաջին վարչության  
գլխավոր մասնագետ,  
տնտեսագիտության թեկնածու*

## **ԳԱՐԵԳԻՆ ՆԺՂԵՂԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ\***

*Սոցիալապես որքան արդար՝ այդքան գորավոր է Հայրենիքը:  
**Գարեգին Նժդեհ***

Գարեգին Նժդեհի հարուստ տեսական ժառանգության մեջ, թեկուզ տարրալուծված, ուրույն տեղ են գրավում տնտեսությանը և տնտեսական գործունեությանը վերաբերող մտքերը, դիտարկումներն ու վերլուծությունները:

Տնտեսագիտության մասին նրա հայացքները կենտրոնացված են անավարտ մնացած «Աշխարհայացքային արդարացումներ. տնտեսական մարդը» աշխատանքում: Զննարկվող թեմայի վերաբերյալ Նժդեհի այս և մյուս աշխատություններում հանդիպող դիտարկումների վերլուծությունը մեզ կարող է օգնել պարզաբանելու նրա տնտեսագիտական հայացքները:

Այսպես՝ վերոհիշյալ աշխատանքում Նժդեհը նշում է հասարակական արտադրության և շուկայական տնտեսության հետևյալ դասական սահմանումները. «Երեք ֆակտորներ են շարժում տնտեսական կյանքը՝ ազատություն, շահ, մրցում (իմա՝ մրցակցություն – Վ.Ա.), որոնք փոխադարձաբար կանոնավորում են իրար: Շարժիչը - տնտեսական էգոիզմն է ... Տնտեսական գործունեությունը - դա մի փակ մեքենական սիստեմ է, որ կարող է ամենալրիվ ներդաշնակությունը ստեղծել, երբ պետությունը և բարոյական օրենքը չեն միջամտում»<sup>1</sup>:

Խոսելով տնտեսագիտության, տնտեսական կյանքի և արտադրության մասին՝ Նժդեհը նշում է, որ դրանք իրենց մեջ կրում են մարդու «ազատագրության» երեք փուլերի ժամանակաշրջանները՝ ռենեսանս, ռացիոնալիզմ

\* Հեղինակը սույն հոդվածը գեկույցի ծևաչափով ներկայացրել է ՀՀ սփյուռքի նախարարության կողմից՝ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի, Երևանի պետական համալսարանի և «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հետ համագործակցությամբ 15/12/2011 թ. կազմակերպված և Գարեգին Նժդեհի ծննդյան 125-ամյակին նվիրված «Գարեգին Նժդեհի գործունեությունը Սփյուռքում» գիտաժողովին:

<sup>1</sup> **Նժդեհ Գ.**, Երկեր, հ. 1, Եր., 2002, էջ 515:

և պոզիտիվիզմ: «Ազատատենչությունը,- գրում է նա,- այնքան հատուկ Ռենեսանսի էպոխային՝ թափանցեց տնտեսագիտական մտածողության մեջ: Ազատություն մտքի, սրտի և աշխատանքի - այսինքն՝ անձնավորության և նրա հանրային հարաբերությանը՝ սա պիտի անդրադառնար կյանքի ամենալայն ասպարեզի - տնտեսության վրա»<sup>2</sup>:

Ներկայացնենք Նժդեհի մեկ այլ հետաքրքիր դիտարկում. «...գոյության պայքարը հասարակության կյանքում չպետք է սահմանափակել, այլ պիտի թողնել ազատ, քանզի դա է օրենքն առաջադիմության: Գարվինն այդ օրենքը վերագրեց ողջ օրգանական բնության: Ամեն կենդանի արարած գտնվում է մշտապես գոյության պայքարի մեջ: Հաղթում է ավելի զորավորը և ավելի հարմարը: Այս ճամփով է տեղի ունենում բնական ընտրողությունը. արժեքավորը և զորավորը կյանքում: Նույնը տնտեսության մեջ: Տնտեսապես տկարները և սակավարժեքները կկորչեն, իսկ զորավորները և արժեքավորները կշարժեն տնտեսական կյանքը: Ընկածները կծառայեն իբրև տոր (գին, բուլդ. - Վ.Ա.) առաջադիմության: Այսպես տնտեսագիտությունը արտացոլեց էպոխայի գաղափարները - ազատություն, անհատապաշտություն, ռացիոնալիստական լավատեսություն և էգոիզմ, իբրև օրենք գոյության պայքարի: Պոզիտիվիզմը ետ մղելով հավատը և մետաֆիզիկական՝ կտրեց մարդկային միտքը գերբնական իրականությունից: Այսպիսով ծնունդ առավ մատերիալիզմը, որը ավելի ևս ազդեց տնտեսագիտության վրա»<sup>3</sup>:

Այս դատողությունները մեզ հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ Նժդեհը քաջատեղյակ է եղել տնտեսագիտական գրականությանը, մասնավորապես՝ դասական տնտեսագիտության փաստացի հիմնադիր, շոտլանդացի խոշոր մտածող Ադամ Սմիթի աշխատանքներին, ում նա համարում է տնտեսական լիբերալիզմի (ազատականության - Վ.Ա.) հիմնադիր:

Գարեգին Նժդեհի տարբեր աշխատանքներում ընդգծվում է նաև պետության՝ սոցիալական արդարությանը նպաստող քաղաքականության անհրաժեշտությունը, որը, ինչպես նա մեկնաբանում է, պետք է արտահայտվի թե՛ հասարակական կյանքում և թե՛ մասնավորապես, տնտեսական գործունեության մեջ: Նժդեհը սոցիալական արդարությունն արժևորում է որպես պետության հզորացման և տնտեսական կայուն ու հարատև զարգացման կարևորագույն նախապայման: «Սոցիալապես որքան արդար՝ այնքան զօրատու է հայրենիքը: Գերերջանիկ է մարդը, որ կարող է ասել. «Իմ հայրենիքում արևը ծագում է բոլորի և ամեն մեկի համար. այնտեղ երկիրը մշակելու և հոգեպես մշակուելու ազատութիւն ունեմ ես»<sup>4</sup>, բանաձևում է նա:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև Գարեգին Նժդեհի դիտարկումները մրցակցության և անկախության վերաբերյալ, որոնք, անշուշտ, պետք է արժևորել նաև տնտեսագիտության տեսանկյունից: Այս-

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 514:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 515:

<sup>4</sup> **Նժդեհ Գ.**, Հատընտիր, Եր., 2006, էջ 347:

պես՝ 1924 թ. Կահիրեում տպագրված «Էջեր իմ օրագրեն» գրքում հանդիպում ենք հետևյալ դիտարկումների. «Բոլոր ժողովուրդները, լուսավորյալ թե վայրենի, ձգտում են արևի տակ հարմար և կայուն մի տեղ գրավել: Նրանք զենքի են դիմում երբեմն ռազմասիրությունից, երբեմն մրցակցությունից, երբեմն կույր ատելությունից մղված: Պատերազմում են, երբ պետք է նորանոր շուկաներ ձեռք բերել, ծովերի տեր դառնալ, երբ պետք է ինքնապաշտպանվել կամ ապահովել այս կամ այն երկրի անկախությունը<sup>5</sup>... անկախությունից զուրկ ժողովուրդները դատապարտված են մահվան, ծառայելով գերիշխան ազգերի համար որպես պարարտացուցիչ աղբ... Անկախ հայրենիք ունենալը իրավունք լինելուց բացի և պարտականություն է<sup>6</sup>»:

Վերոնշյալ դիտարկումներում նույնպես հայրենիքի անկախության գաղափարն ընդգրկում է նաև տնտեսական անկախությունը, քանզի, մեր խորին համոզմամբ՝ պետության տնտեսական անկախությունն անմիջականորեն կապված է պետության քաղաքական անկախության հետ, քանի որ տնտեսապես ամբողջովին կախյալ պետությունը, վաղ թե ուշ, ստիպված կլինի տեղի տալ նաև քաղաքականապես: Անշուշտ, Նժդեհը, լինելով հեռատես և լայնախոհ ազգային, քաղաքական, ռազմական գործիչ, անկախության մասին խոսելով, դիտարկում էր դա նաև տնտեսական տեսանկյունից, սակայն, հաշվի առնելով ժամանակի հրամայականը, նա աշխարհասփյուռ հայությանը փորձում էր միավորել համազգային ամենամեծ, առաջնային խնդիրների լուծման շուրջ՝ նախ պահպանել ազգային ինքնությունը, համախմբվել, տիրել հայրենիքին և հասնել քաղաքական անկախության:

Զննարկվող թեմայի համատեքստում ուշադրության է արժանի նաև Նժդեհի՝ Բուլղարիայում իր իսկ կողմից հրատարակվող «Ռազմիկ» թերթի 1941 թվականի համարներից մեկում ներկայացված հետևյալ միտքը Երկրորդ համաշխարհային պատերազմի բռնկման պատճառների վերաբերյալ. «...ժողովուրդները ո՛չ միայն քաղաքական և տնտեսական մրցողներ են, այլև՝ հոգեբանական հակոտնյաներ... Պատերազմը պայթեց ո՛չ թե վարչաձևերի տարբերության – որ այնքան բնական է ու հասկանալի – այլ այն պարզ պատճառով, որ «դեմոկրատիա»ներից մեկը իր մեծությունը, բարօրությունն ու ապահովությունը մարդկության մի մասի թշվառության վրա կառուցած, դեռ շարունակում է քաղաքա-տնտեսապես չարաշահել նրա տկարությունը»<sup>7</sup>:

Վերոնշյալ դիտարկման մեջ հատկանշական է նաև այն հանգամանքը, որ, բնորոշելով պատերազմող կողմերին, Նժդեհը դեմոկրատիա (ժողովրդավարություն – Վ.Ա.) բառը դնում է չակերտների մեջ՝ թերևս հարցականի տակ դնելով այդ երկրների իրական ժողովրդավարական արժեքներին հավատարիմ լինելը և իրենց կողմից իրականացվող քաղաքականության մեջ այդ գաղափարներով առաջնորդվելը: Որպես ասվածի հիմնավորում բերենք նրա մեկ այլ դիտարկում. «Բարոյական դեմոկրատիան,

<sup>5</sup> Նժդեհ Գ., Երկեր, հ. 1, Եր., 2002, էջ 19:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 51:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 457-458:

մարդկային արարածի անկատարելութեան պատճառով, կը մնայ երագ, ինչպէս երագ մնաց ճշմարիտ քրիստոնէութիւնը»<sup>8</sup>:

Ուշադրության է արժանի նաև այն, որ Գարեգին Նժդեհը, 1935 թվականին Սոֆիայում հրատարակված «Ամերիկահայությունը – ցեղը և իր տականքը» աշխատանքում, խոսելով ամերիկյան միջավայրի՝ ազգերի այդ խառնարանի մասին, հայության ծուլմանը և ուժացմանը նպաստող աշխարհագրական և հոգեբանական գործոններին զուգահեռ նշում է նաև տնտեսական գործոնը. «Տնտեսական տկարությունը հայ միջակորեար դասի, որի հետևանքով ազգի մեծագույն մասը մնում է ճնշված օրվա հացի պայքարի մղձավանջի տակ և համակվում՝ ավելի գործ փնտրելու, քան թե գործ ստեղծելու տրամադրությամբ, որով՝ էապես զրկվում է նախաձեռնական ոգուց, ինչպէս նաև անանձնական բարձր նպատակներով տևաբար ապրելու հնարավորությունից»<sup>9</sup>:

Խոսելով ամերիկահայության մասին՝ Նժդեհը փաստում է, որ առևտրի ու գործարարության ոլորտում ներգրավված հայությանը բնորոշ է ոչ համագործակցական, իմա՝ ձեռնարկատիրության անհատական բնույթը, որի պատճառով զարգանում է հոգևոր մենասիրությունը և եսական շահապատուությունը: Նա ցավով նշում է, որ հայկական դրամագլուխը, հայկական կապիտալը մեծակշիռ չէ և ունի ոչ արդյունաբերական բնույթ, որի պատճառով անկարելի է դարձնում հայ մտավորականի, արվեստագետի, դրամատիրոջ և բանվորի ճիգերի համախմբումը, ինչը կարող էր նպաստել ազգային կյանքի արդյունավետ կազմակերպմանը, և, ամփոփելով փաստում, որ ամերիկահայությունը ցրված է ոչ միայն աշխարհագրորեն, հոգեբանորեն, այլ նաև տնտեսականորեն, որ այն միասնական օրգանիզմ չէ, այլ՝ մասնատված օրգաններ:

Եվ, վերջապես, հարկ է անդրադառնալ նաև աշխատանքի նկատմամբ Նժդեհի վերաբերմունքին: Աշխատանքը նա բնորոշում է որպես կյանքի ամենամեծ ուժ, ամենամեծ արժեք, օրենքների օրենք հայի համար, իսկ նկարագրելով իր ժամանակաշրջանը՝ գրում է. «Չէ՞ որ անխոս ինքնախոստովանություն, ինքնաարձանացում է, ինքնաարտահայտություն է աշխատանքը: Այսպէ՛ս, ոգու այդ նոր աշխատանքի մէջ ընկերայնորեն սրբվում են, երիտասարդանում, վերածնվում - ազգայնանում են ազգերը»<sup>10</sup>:

Հարկ է նշել, որ Նժդեհը չափազանց բարձր է գնահատում նաև հայի ստեղծագործական, շինարարական կարողությունները և նրան համարում շինարարության բնածին հերոս: Միևնույն ժամանակ, նա չափազանց կարևորում է կապիտալի և հայ դրամատերերի դերը Հայ դատի արդար լուծման գործում: Մասնավորապես՝ Սոֆիայում հրատարակվող «Նոր Արաքս» պարբերականի 1930 թվականի համարներից մեկում իր «Բաց նամակ Մայքլ Արլենին» հոդվածում նա քննադատաբար և ցավով գրում է. «Մեր պատմության ընթացքում - զիտցեք և՛ այդ - մեծահարուստ հայը չեղբայրացավ հայ մտավորականին, ո՛չ էլ ազգերի բախտի հետ խաղացող ուժերի բարեկամությունը փնտրեց: Միայն զմյուռնիացի հայոց հարստու-

<sup>8</sup> Նժդեհ Գ., Հատընտիր, նշվ. հրատ., էջ 606:

<sup>9</sup> Նժդեհ Գ., Երկեր, հ. 1, նշվ. հրատ., էջ 171-172:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 236:

թյամբ կարելի պիտի լիներ մի մեծ Հայաստան գնել: Այդ ծով հարստության մի չնչին մասն իսկ - որը քեմալականները քանուն տվին - պիտի բավարարեր հրեաբար կաշառելու մարդկության երեք քառորդի խղճմտանքը, այն հայասեր դարձնելու աստիճան: Բայց - անե՛ծք մեկուսի երջանկության դավանանքին - հայ ցեղի ապրած և ապրվելիք բոլոր տեսակի դժբախտության անիծված ակնադրյուրին անե՛ծք... Ոսկեքսակ հայը չկանգնեց ոսկեգրիչ մտավորականի թիկունքում, և այդ վերջինի լեզուն՝ կարճ, խոսքն անլսելի եղավ միջազգային արեոպագների (ատյաններ - Վ.Ա.) մեջ: Եվ եղավ այն, ինչ որ եղավ»<sup>11</sup>:

Ամփոփելով թեման՝ անհրաժեշտ է արձանագրել, որ հայության տնտեսական կյանքի կազմակերպման հարցերի վերաբերյալ Գարեգին Նժդեհի խոհերն ու բարձրացրած խնդիրները նույնքան արդիական են նաև մեր օրերում և կարող են մեծապես օգտակար լինել Հայաստանի ու համայն հայության տնտեսական կյանքի արդյունավետ կազմակերպման գործում:

#### **ВАРДАН АТОЯН**

*Главный специалист Первого управления Аппарата Совета Национальной Безопасности РА,  
кандидат экономических наук*

**Наблюдения Гарегина Нжде об экономике и организации экономической жизни армян.-** В статье представлены мысли и наблюдения известного армянского национального, военного деятеля и идеолога армянской патриотической мысли XX века Гарегина Нжде, связанные с экономикой, экономической жизнью и экономической деятельностью. Анализируются подходы и наблюдения Гарегина Нжде о необходимости достижения социальной справедливости в обществе, конкуренции, о природе предпринимательства армян в диаспоре, а также роль всемирного армянского капитала в справедливом решении Армянского вопроса.

#### **VARDAN ATOYAN**

*Chief Specialist at the Staff of the National Security Council of the RA,  
PhD in Economics*

**Garegin Nzhdeh's observations on economics and organization of economic life of the Armenian nation.-** The article presents eminent Armenian ideological and military actor of the XX century Garegin Nzhdeh's ideas, observations and analysis on economy and economic life of the Armenian nation.

Furthermore, Garegin Nzhdeh's observations on the necessity of reaching social justice, competition, entrepreneurship of business sector of Armenians in Diaspora, as well as capital and role of Armenian bankers in the issues of fair resolution of Armenian trial are mentioned.

---

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 339: